ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԸ ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ (1868—1870 թթ.)

Ա. Մ. ԳԼՋՅԱՆ

1868 թ., մի օր, Հակոբը, որ արդեն ընդունել էր Պարոնյան գրական ազգանունը, հասկացավ, որ անելիք չունի Կ. Պոլսում։ Հավաքեց իրերը, հրաժեշտ տվեց ծանոթներին և ճանապարհ ընկավ դեպի Ադրիանուպոլիս՝ ծննդավայր։

Ընդամենը հինգ տարի առաջ այս նույն ճանապարհով նա գալիս էր Կ. Պոլիս՝ լի հույսերով, թեկուզ սրտի դողով։ Մեծ քաղաքը այն ժամանակ նրան պատկերանում էր միայն լուսավոր կողմերով, իբրև մշակույթի խոշոր կենտրոն, երազների իրականացման ցանկալի վայր։ Իսկ հիմա... Նա խզում էր հարաբերությունները այդ քաղաքի հետ՝ մերժելով նրա թերությունները։

Սակայն այդ մերժումը անհրաժեշտ է ճիշտ հասկանալ։ Կ. Պոլսում անցկացրած հինգ տարիները շատ օգտակար էին եղել սեփական ճանապարհի փնտրտուքի շրջանում գտնվող գրականագետի համար։ Այստեղ առաջին անգամ նա լիարժեք հնարավորություն ստացավ հաղորդակցվելու հոգևոր մեծ բնագավառի ու դրա հավատավորների հետ։

Կենսագիրները հիշում են. երբ երիտասարդ Հակոբը 1863 թ. առաջին անգամ ոտք դրեց Կ. Պոլիս, նրան դիմավորեց հորեղբոր որդին՝ ազատախոհ բժիշկ Հովհաննես Քյաթիպյանը և խնամք տարավ նրա նկատմամբ, իր բնակարանում հատկացնելով առանձին սենյակ։ Այստեղ Հակոբը ապրեց որոշ ժամանակ։

Հ. Քյաթիպյանը ճշմարիտ մտավորականի տիպար էր։ Գիտելիքների նկատմամբ մեծ սերը նրան տարել էր Փարիզ, ուր բժշկական բարձրագույն կրթություն էր ստացել, միաժամանակ հետամտել դարաշրջանը հուզող թարմ գաղափարների։ Բնագիտության նվաճումների մեջ խորանալով՝ հակվել էր դեպի մատերիալիզմ։ Նրա սեղանի գրքերն էին Մ. Նալբանդյանի «Երկու տող» ու «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունները, քաղաքական բովանդակություն ունեցող նամակները, նրա գրադարակները ծանրաբեռնված էին եվրոպական լուսավորական մտքի ներկայացուցիչների աշխատություններով։ Քյաթիպյանը գաղափարակից էր մասնավորապես «Մեղու» երգիծական հանդեսի շուրջ համախմբված գործիչներին՝ Հ. Սրվանձյանին, Ս. Թագվորյանին և ուրիշների։

Գավառից եկած, մեծ քաղաքի լաբիրինթոսի մեջ հայտնված Հակոբի համար անշուշտ շահեկան էր հենց սկզբից Հ. Քյաթիպյանի նման հովանավոր ունենալը։ Մանավանդ, չի բացառվում, որ ժամանակին այս հորեղբորորդու կերպարն էր նրան մղել բժշկության ասպարեզի աստիճաններին մեկը հանդիսացող դեղագործությանը դիմելու։ Հիմա ինքը նրա եղբորն էր։

Ազգակցական բնական զգացմունքները, որոնք իշխում էին ադրիանուպոլսեցիների ընտանիքներում, սրտակցություն են ստեղծում երկու եղբորորդիների միջև։ Իսկ նրանք իրար ասելու շատ բան ունեին։

Զարմանալի քաղաք էր նրանց ծննդավայր Ադրիանուպոլիսը։ Իր բնակիչներին նա օժտում էր տոհմիկ նկարագրով, կյանքի ու աշխարհի նկատմամբ իրատես հայացքով, կեցության հաճույքը վայելելու ճաշակով, նաև սրամտության ու հեգնախոսության շնորհքով։ Վերջինս, որ անշուշտ մտքի նրբության ու ճկունության նշան էր, սակայն ինչ-որ սահմաններում սովորաբար կորցնում էր իր շինիչ ուժը, վերածվում հատկապես անհատականության ձգտող երիտասարդների համար անարդարացի հալածանքի առիթի։ Շատե-

բը չհանդուրժելով կամ չտանելով այդ մշտական կսմիթները, թողնում-հեռանում էին ծննդավայրից։ Եվ անգամ տարիներ հետո, երբ այդ երիտասարդները դիրքի էին հասնում իրրև մտավորական, բժիշկ, վաճառական և այլն, նույնիսկ եթե քնքուշ զգացմունքներով կապված էին մնում նրա հետ, չէին մոռանում անախորժ պահերը[1]։

Հ. Քյաթիպյանը լավ էր հասկանում իր կոչման ճանապարհի ոլորապտույտներում գտնվող, ինքնահաստատվել ձգտող Հակոբին։ Օգտակար էր լինում նրան իր գիտելիքներով, փորձով, ծանոթություններով, խորհուրդներով։ Անգնահատելի դեր է խաղում նորեկի որոնումների շրջանը կարճացնելու, մանավանդ, մեծ քաղաքի խայտաբղետ կյանքը իմաստավորելու տեսակետից։ Բայց յուրաքանչյուր, մանավանդ տաղանդավոր մարդու գլխավոր խնդիրներից մեկը ոչ թե ուրիշների անցած ճանապարհով գնալը, նրանց պատճենելն է, այլ սեփական էությունը գիտակցելով՝ իր կոչմանը հետևելը։ Կ. Պոլիս գալով հենց սկզբից դրան էլ հետամուտ էր եղել Հակոբը։

Հիշենք վերստին, որ մայրաքաղաք գալիս նա արդեն կազմակերպված անձնավորություն էր, ուներ հայացքներ, նախասիրություններ։ Այժմ պատասխանենք հետևյալ հարցին. ի՞նչ էր նրան տվել Կ. Պոլիսը 1863—68 թթ.։

Մեր ներկայացրած տարիներից ոչ շատ ժամանակ հետո անդրադառնալով այդ մեծ քաղաքի բնութագրմանը, Հ. Պարոնյանը արտահայտվում է. «Ամեն տեսակ մարդ կա, անհամար տեսակ հագուստ, հարյուրավոր կերպ հագված մարդիկ. ծեր, պառավ, կտրիճ աղջիկ ուս-ուսի կը քալեն, որը ֆես դրեր է գլուխը, որը փաթթոց, որը քյուլլահ, որը շապխա, որ մեկն ալ բաց գլխարկով կերթա։ Այս բազմության խառնված կը տեսնվին աղտոտ շուներ, ձի կամ եզ լծած սայլեր ու կառքեր. եթե որ չզգուշանաս՝ հանկարծ խարազան մը կուտես ականջիդ, կամ Ֆյաթ հարված մը գլխուդ, մեկեն ետևդ կը դառնաս և կը տեսնես որ ականջդ կսմթողը կառավարի մը (արապաճիի) խարազանն է, որով իր ձիերուն զարնել ուզելով՝ ծայրը քեզի դիպեր է...

Պոլիսեն զատ ուրիշ չկա քաղաք մը ուր այնքան շատ ազգեր գտնվին. տաճիկներեն ու հայերեն զատ կան հոռոմ, հրեա, ֆրենկ, պուլկար, արնավուտ, խրվաթ, սև ու ճերմակ արաբներ և ուրիշ շատ ազգեր... Քաղաքի բոլոր բնակիչքը մեկ միլիոն երկու հարյուր հազար կը հաշվեն՝ որոնց կեսը տաճիկ և մյուս կեսը, որ վեց հարյուր հազար հոգի կընե, ուրիշ ազգեր են, այս ազգերուն մեջեն հայերը այսօր ամենեն շատ են՝ որոնց համրանքը երկու հարյուր հազար հոգիի չափ կը հաշվեն՝ կնիկ ու էրիկ մարդ, մեծ ու ոգտիկ մեկտեղ սեպելով... քառասուն հազար մարդ ալ խեղճ խարիպներ կան՝ որոնք իրենց ընտանիքեն, տունեն ու տեղեն հեռու անտանելի խեղճության մեջ կապրին»[2]։

Այս քաղաքում Հակոբն ինքն էլ իր տեսակի մեջ մի «խարիպ», ստիպված էր ոչ միայն հանապազօրյա հաց վաստակելու մասին մտածել, այլև բարձրանալ հոգևոր պահանջմունքների, սեփական կոչման գիտակցության թելադրմամբ։

Կ. Պոլսում Հակոբի հնքնակրթությունը ընթանում է երկու ուղղությամբ։ Նա գրական ուսումնառության որոշ պաշարներ ու նախասիրություններ ուներ նախորդ շրջանից։ Նրանք վերաբերում է դասական գրականության ու մշակույթի հետ ծանոթությանը։ Նոր պայմաններն այժմ նրան լայն հնարավորություն են ընձեռում հաղորդակցվելու նաև ժամանակակից հայկական մշակույթի հիմնահարցերին։ Ազգային գեղարվեստական այդ տարիներին զարգացման չափազանց կարևոր փուլում էր գտնվում, սկզբունքային, պատմական խնդիրներ էին առաջադրվում. նոր ազգության հոգևոր շենքի հիմքերն էին դրվում։ Երկու պատմաշրջանների հաջորդափոխման փուլում ապրող հասարակության

---

1 Հ. Աղասյան, Ադրիանուպոլսի հայ գաղութը, Պլովդիվ, 1935, էջ 103։

2 Թատրոն բարեկամ մանկանց, Կ. Պոլիս, 1876, № 2, էջ 16։

կյանքը, մշակույթը, արծարծվող խնդիրները բազմազան էին, հետաքրքրական, կարևոր։ Արդեն 1850-ական թվականներին սկզբնավորված գրապայքարը թափ էր ստանում՝ հասարակական մտքի հասունացմանը զուգընթաց խորացնելով իր արծարծումները, ընդգրկելով նորանոր հիմնահարցեր։ Գրական հին և նոր լեզուների հաջորդափոխման շուրջ բորբոքված գրապայքարը շատ ավելին էր բովանդակում, քան լոկ լեզվական հարցերը։ Նոր ազգության կազմավորման ընթացիկ սկզբունքային խնդիրների մի այլ հանգույց էր սահմանադրական պայքարը։ Այս խնդիրների շրջանակի միջոցով նոր ազգության ճշմարիտ նկարագրի և ապագայի համար նախանձախնդիր մտավորականները առաջադրում էին կրոնազերծված ազգային մարմնի ստեղծման հարցեր։ Նոր ազգության վերածննդի կարևորագույն բնագավառ էր մշակույթը՝ հրապարակագրությունը, գրականությունը, թատրոնը, երաժշտությունը։ Արևելյան թատրոնի լավագույն տարիներն էին։ Թատրոնը առաջադիմության ջահակիր էր։ Նա ազգային-մշակութային գաղափարներ արծարծելու, լուսավորության, առաջադիմության ու գեղեցիկի միավորման հարմարագույն բեմն էր։ Նույնիսկ անմրցակից էր թվում նա իր ունեցած հնարավորությունների տեսակետից։

Այս շրջանում իր առաջին, բայց հաստատուն քայլերն էր անում հայ նոր գրականությունը։ Ղ. Ալիշանը, Մ. Պեշիկթաշլյանը, Ա. Բագրատունին, Ն. Ռուսինյանը, Գր. Օտյանը, Թ. Թերզյանը, Մ. Մամուրյանը և ուրիշներ ժամանակի մշակութային կյանքի հունն էին բացում։ Թատերական ասպարեզում փայլում էին Թ. Թերզյանի, Մ. Պեշիկթաշլյանի և այլոց ինքնուրույն, Ալֆիերիի, Հյուգոյի և ուրիշների թարգմանական թատերախաղերը։ 1862 թ. տեղի ունեցավ Զեյթունի նշանավոր ապստամբությունը՝ խանդավառ սերնդի աչքի առաջ թատերական հերոսների փոխարեն ներկայացնելով իրական մարդիկ, որոնք իրենց գործով ցնցում էին Օսմանյան կայսրությունը։

Բացի վերոհիշյալներից, Կ. Պոլսի հոգևոր կյանքի վրա խոշոր ազդեցություն էին գործում նաև այլ նշանավոր մտավորականներ, ազգային գործիչներ, բարեբարներ, լուսավորական գործի նախանձախնդիրներ։ Նրանք (մասնավորապես նալբանդյանական գաղափարներով համակված Հ. Սրվանձյանը, Ստ. Ոսկանյանը, նաև Գ. Օտյանը, Ն. Վարժապետյանը, Պալյանները և այլք) գավառից նոր եկած ուսումնատենչ տաղանդի հոգում խոր հետք էին թողնում։

Իհարկե, երիտասարդ Պարոնյանը միայն հիացող չէր։ «Երկու տերով ծառա մը» թատերախաղը համոզիչ վկայում է նրա աշխարհայեցողության վրա նոր կյանքի նստվածքը, ազդեցությունը։ Միայն Գոլդոնիին ու Մոլիերին հետևելով չէ, որ նա տեր ու ծառա թեման էր արժանացրել ուշադրության։ Արվեստագետները սովորաբար ձեռնարկում են այն նյութին, ինչ ավելի լավ են ճանաչում։ Այս թատերախաղում եթե նրա գեղագիտական աշխարհայեցողությունը գրքային է, ապա սոցիալական հարցադրումների մեջ շատ բան բխում է անձնական փորձից։ Իսկ «Ատամնաբույժն արևելյանի» մեջ սոցիալ-ազգային կյանքի հարցերը քննելիս նա արդեն ինքնուրույնություն է հանդես բերում։ Նախ նա, փաստորեն էական քայլ է կատարում սեփական գրականություն-թատերգություն ստեղծելու ճանապարհին, դրանով իսկ ազդարարելով գրականության իր պատկերացումների ու նախասիրությունների մասին։ Դեռ ոչինչ չի ասում այն հանգամանքը, որ քիչ անց, ավելի բարձր գեղարվեստական պահանջմունքների դիրքերից նա պիտի մերժի այդ թատերախաղը՝ այն համարելով դրավաճառներից, էականն այն է, որ նա ինքնուրույն հայացք է մշակում։ Խոսուն է նրա վերաբերմունքը սահմանադրական պայքարին։ Ի դեպ, այդ վերաբերմունքի բազմաշերտությունը պիտի ըմբռնել։ Սահմանադրության բուն գաղափարին նա դեմ չէ, սակայն նկատում է մեզանում ստեղծված՝ անբարենպաստ պայմանները, որոնց մեջ պիտի գործի սահմանադրությունը։ Կա մի ելք, գտնում է նա. «Երեսփոխանները պետք է դանիկա քա-

լեցնեն»[3], բայց նրանք էլ ջանադիր չեն ոչ միայն այդ, այլև մնացած ազգային գործերի մեջ։

Ինչպես ցույց է տալիս այս թատերախաղի նույնիսկ հպանցիկ ուսումնասիրությունը, Հ. Պարոնյանի հայացքը 1863—68 թթ. արդեն ընդգրկում էր արևմտահայ կյանքի շատ հարցեր՝ ազգային նկարագրի ստեղծման, ճշմարիտ հայրենասիրության, եվրոպական լուսավորական գաղափարների և դրանց փոխարեն հաճախ տարածվող թյուր պատկերացումների, նոր ընտանիքի մեջ կնոջ ու տղամարդու փոխհարաբերության, ազգային կյանքի այնպիսի հաստատությունների գործունեության, ինչպիսիք են քաղաքական, թաղական և կրոնական ժողովները, լրագրական կենցաղը և այլն։ Ընդ որում, ոչ միայն երևույթներ դիտող ու արձանագրող է նա, այլև դրանց նկատմամբ ինքնուրույն մոտեցում հանդես բերող։ Հետաքրքրական է, օրինակ, որ նա աշխույժ կոմիկական թատերախաղ է ստեղծում և, հանկարծ, նրա հերոսները «մոռացած» թատերական գործողության տրամաբանությունը, սկսում են խոսել հայության ամենացավոտ խնդիրներից մեկի՝ պանդուխտների սոցիալական թշվառ դրության մասին։

«ԹԱՓԱՌՆԻԿՈՍ—Զըսես որ հայությունը թշվառ կացության մեջ կը գտնվի այսօր....

ՄԱՐԳԱՐ—Այնպես է։ Մինչդեռ լուսավորյալ ազգերը ազգիազգի հնարքներով զանազան մեքենաներ կը շինեն և անոնցմով կը կատարեն անասուններուն տեսնելու գործը, մենք, հայքս, անասուններու վերաբերյալ գործերն անգամ (կամչընամ ըսելու) մեր վրա կառնենք։ Մեր պանդուխտ եղբայրները ըսել կուզեմ, որ բեռնակրության անտանելի լուծին երկնցնելով իրենց վիզը, հազիվ կրնան իրենց օրական ապրուստը ճարել, փողոցի մեջ, քարերու վրա, գիշերն ալ պանդոկներու մեջ, հեռու հայրենիքեն... զուրկ ընտանիքեն, և թերևս ոմանք ալ բոլորովին հուսաբեկ հայրենիք դառնալեն, ահ ու դողով կանցնեն իրենց ժամերը. այսպիսի գթաշարժ տեսարանի մ'առջև, որ հայն կրնա անտարբեր հանդիսատես մնալ»[4]։

Այնուհետև, թատերական երկխոսության փոխարեն օգտագործելով հրապարակախոսական հնարք և արդեն զրուցելով ոչ թե Թափառնիկոսի, այլ դահլիճում նստած հանդիսատեսի հետ, Մարգարը շարունակում է.

«—Որովհետև ազգին վիճակը իմանալ կուզես, բաց ականջներդ, լսե, խորհե և թող աչքերեդ արտասվաց հորդառատ։ վտակներ իջնան ծնոտդ ի վայր, անոնց համար կը խոսիմ, վասնզի Հայաստանի զավակունք են և հայրենիքը իր ազատության հույսը անոնց բազուկներուն վրա դրած է, այն բազուկներուն՝ որք այսօր տկարանալու վրա են և թերևս օր մը բոլորովին ոչնչանան հայրենյաց հուսո հետ»[5]։

Կ. Պոլսում գտնվելու տարիները փաստորեն կյանքի ու մշակույթի հետ հաղորդակցվելու համալսարաններ էին եղել երիտասարդ տաղանդի համար։ Այս ընթացքում նա շատ բան էր տեսել, ապրել, ճանաչել, փորձել, մերժել։ Նրա հոգին նոր պայմանների մեջ էր աճել ու թրծվել։ Նա ձեռք էր բերել նոր պահանջմունքներ, նորոգել ճաշակը, ճանապարհի որոնումներում առավել նկատելի էր դարձել ուսումնական իդեալի դերը։ Նա կյանքի փորձության մի կարևոր շրջան էր անցել, շատ բան գիտեր աշխարհի ու իրականության մասին։ Միշտ մնալով ինքնուրույն մտածող՝ արդեն սեփական հայացքով էր իմաստավորում իրականությունը։

Աստիճանաբար Հակոբի հոգում մեծ տեղատարմ նկատվեց։ Սկզբում ամեն ինչ էր փորձում տեսնել ու վայելել։ Հետո արդեն աներկբայորեն արտահայտվում էր իր տեսած ցավոտ խնդիրների մասին։ Ագրիանուպոլսեցու իր բնատուր հեգնանքի զինանոցը լիովին օգտագործում էր թերությունները ձաղկելու

---

3 Հակոբ Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 121։

4 Նույն տեղում, էջ 120։

5 Նույն տեղում։

համար։ Սակայն եկավ մի պահ, երբ նա սկսեց դառնությամբ, նույնիսկ ատելությամբ վերաբերվել այդ մեծ քաղաքին։

Ի՞նչն էր դրա պատճառը։ Ի վերջո ինքը Կ. Պոլսում մի «խարիպ» էր, անհարազատ, դատարկ գրպանով։ Ամեն կերպ նա ձգտել էր ազնիվ աշխատանքով նյութական որոշ կայուն վիճակ ստեղծել, բայց դա հնարավոր չէր։ Իհարկե, կար մի ճանապարհ. այդ ուղին բռնում էին շատերը։ Նրանք օրնիբուն ապրուստ էին ճարում՝ իրենց սիրտն ու հոգին կեղծելով։ Իր համար ընդունելի չէր այդ ճանապարհը։ Հատկապես անտանելի էր, որ այդ ընթացքի մեջ էին ընկնում բնատուր օժտվածություն ունեցող մարդիկ. նրանք շուտով վերածվում էին զարդարուն արտաքինով մուրացիկների։

Կար երկրորդ լուրջ պատճառը, որից դառնանում էր իր հոգին։ Երկու դրական փորձ էր արել, բայց այդպես էլ ցանկալիին չէր հասել։ Չգիտեր, ի վերջո ով է ինքը, ինչի է ընդունակ։

Պիտի որ լիներ նաև երրորդ պատճառը, այս անգամ կապված Հեռագրական գործակալության մեջ իր գրասենյակային աշխատանքի հետ։ Ի վերջո նա խառնվածքով ազատ մարդ էր՝ կապ ու կապանք չհանդուրժող հոգով, իսկ այստեղ հանապազօրյա հացի համար նա ստիպված էր ծառա լինել։ Թերևս տանելի կլիներ, եթե այդ զոհողությունը օգներ, որ նա Կ. Պոլսում գնար իր երազանքներին ընդառաջ, իսկ այժմ, երբ պարզվում էր, որ ինքը անորոշ ընթացք է բռնել, ինչ իմաստ ուներ զոհողությունը։

Կ. Պոլսից հիասթափվելով՝ հիմա պիտի որ նա մտածեր այսպես. իհարկե, ինքը ավարտված չի համարում իր ինքնուրոնումը։ Նույնիսկ՝ հակառակը, հիմա առավել հստակ է տեսնում իր հետագա ընթացքը։ Բայց ինքնաբացահայտման համար պե՞տք էր արդյոք այդքան հեռու՝ մեծ քաղաք գալ։ Կարող էր մնալ հայրենի միջավայրում, ապրել հարազատների հետ, եթե պետք է ծառայել, եղբոր գրասենյակում կաշխատեր։

Ադրիանուպոլսում Հակոբին ջերմորեն ընդունեցին։ Ընտանիքի միավորման ու բարեկեցության վարդագույն ծրագրեր կազմեցին։ Ինչպես վկայում են կենսագիրները, Սահակ եղբայրը, որ արդեն քաղաքում ճանաչված վաճառական էր, բավական զոհաբերող աշխատավարձ նշանակեց եղբորը։ Կենսագիրներից մեկը նույնիսկ ակնարկում է, թե Հակոբը այստեղ էլ, ի դեպ, ինչպես Կ. Պոլսում, հեռագրատան պաշտոնյա եղած ժամանակ, «շռայլ ու զբոսասեր կյանք» է անցկացնում՝ «զվարթ բարեկամներու հետ»։ «Կնոջ ու ալքոլին բոլոր հրապույրները կը վայելեն,—շարունակում է այնուհետև նույն կենսագիրը,—շվայտանքի մեջ խեղդելով իր երիտասարդի ավյունը»[6]։

Փորձենք վերլուծել կենսագրի հիշատակած տեղեկությունները. իսկ գուցե ստեղծագործող անհատի կյանքը բացատրելու գործում անհասկացողություն կա։ Նախ, որ նա սկզբունքային, ուղղամիտ, արդեն հասարակական ու դեղագիտական որոշակի իդեալներ ունեցող անձ էր, անկասկած է։ Դա է վկայում մասնավորապես նրա «Ատամնաբույժն արևելյանը», որի մեջ դրսևորվել են լրջմիտ արվեստագետի հայացքները մարդու, ժողովրդի, իրականության խնդիրների մասին։ Ինչ վերաբերում է նենսագրի նշած փաստորեն բարոյական մեղադրանքին, այն պիտի վերապահությամբ ընդունել։ Ինչու մտածել, թե այս շրջանում Պարոնյանը զբաղվում էր դեղձանիկի անհոգ կյանքով ապրելու ծնդրալայր էր հնել «Ատամնաբույժն արևելյանը» հրատարակելուց հետո, հոգեբանական, բուրգ տալ ա։ կոնֆլիկտի թելադրությամբ, անսալով ընտանիքի վերադարձի խնդրանքին։ Այստեղ նրա համար ստեղծվում են կենցաղային նպաստավոր պայմաններ, և նա ապանուգրությունքեմ ոգով «ապրում է խաղաղ, ուրախ, առողջ կյանքով, խմում է ու քեֆ անում»[7]։ Այստեղ ինչ կա

6 Հրանտ Ասատուր, Պարոնյանի առաջին քայլերը (Լույս, Կ. Պոլիս, 1903, № 1—13, էջ 645)։

7 Տե՛ս Ս. Սողոմոնյան, Արտասահմանյան դրականության պատմություն, Երևան, 1981, էջ 274։

պախարակելի։ Անհասկանալի է հետևյալը. կենսագիրը զվարթ բարեկամների հետ Հակոբի անցկացրած «շոայլ», «զբոսասեր», կանանցով ու ոգելից խմիչքներով ուղեկցվող կյանքի փուլի մասին ակնարկելով ինչու է ընդգծում մեղանչանքի փաստը միայն։ Իսկ ուր են երիտասարդ տաղանդի հոգևոր կյանքը վկայող տեղեկությունները։ Դրանց մասին կենսագիրը լռում է. այդպես է վարվում, որովհետև դրանք չի տեսնում։ Կին, գինի, զբոսասիրություն, զվարթ բարեկամներ. այս ամենը վկայում են արվեստագետի կենսասիրության մասին։ Ծայրահեղություններ է ունեցել, այո՛, բայց ինչու դրանց պատճառները փնտրել բարոյական անկման, չափազանց զգայնիկության և ոչ թե հոգևոր կյանքի վարուվերումների մեջ։ Սարդու և տաղանդի այս տեսակը ուրիշների հարթած ճանապարհով երբեք չէր կարող ընթանալ։ Բացի այդ, եթե ընդունում ենք, որ նա հոգևոր հաղորդակցմամբ կապված էր Վերածնության դարաշրջանի հումանիստների կենսափիլիսոփայությանը, ինչու ենք մերժում, երբ հանկարծ դիտում ենք, որ նույն տաղանդը նաև հանկարծ ձգտում է իր երիտասարդական կյանքի որոշ փուլերում այդ ոգով ապրել։

Պարոնյանի իրական կյանքի մասին առավել հավաստի է նույն կենսագրի այս վկայությունը. «Էտիրնեի մեջ իր հաճույքներեն մեկը եղած է զբոսավայրեր երթալ և լսել արևելյան աշուղներու երգը»[8]։ Ուրեմն, ծննդավայր վերադառնալով՝ նա ոչ միայն չի կտրել կապը արվեստի, գեղեցկի հետ, այլև այստեղ ևս ձգտել է այն պայմաններին, միջավայրին, ուր կարող էր այդ պահանջմունքը բավարարել։ Բայց նա արևելյան աշուղների երգին է դիմում արդյո՞ք միայն իբրև զվարճանքի միջոցի։ Փաստերը հակառակն են ասում։ «Օր մը,—հիշում է կենսագիրը,—իր եղբայրը քսան ղուրուշնոց ոսկիներ կուտա իրեն, որպեսզի դրամափոխի մը տանի և արծաթ դրամով փոխանակե։ Պարոնյան կը տեսնե, որ այդ դրամներեն ոմանք ավրված կամ ծակված, պակաս կարժեն։ Լավերը միայն արծաթի կը վերածե և մյուսները իր քով կը պահե. իրիկվան զբոսարան կը հանդիպի, ուր կը տեսնե Պիլալ երաժիշտը, այն ժամանակ շատ համբավավոր՝ Էդիրնեի մեջ։ Չի դիմանար, կը հրամայե աշուղին, որ հյուզզամ երգե, իր նախասիրած եղանակը։ Հոն արևելյան երաժշտության ազդած գինովության մեջ մնացած հինգ-վեց ոսկիները ամբողջ կը վատնե և գիշերը, երբ տուն կը դառնա, հաղթանակի մը պես, որ իր հաջողությունը կավետե, կըսե իր եղբորը. «Տված քսաննոց ոսկիներուդ մեջ քանի մը հատ ավրրվածներ կային, որոնք պակաս կարժեին. բայց ես հաջողեցա ղանոնք ալ քսան ղուրուշի քշել»[9]։

Այս պատմությունը կարդալուց հետո խորհում ես. Պարոնյանը քսանհինգ-քսանվեց տարեկան երիտասարդ էր։ Մի՞թե նա իսկապես չի իմացել դրամի արժեքը։ Անշուշտ հասկացել է։ Ուրեմն ...այս տեղեկության մեջ թյուրիմացություն կա։ Կենսագիրը, ամենայն հավանականությամբ մեկից լսելով այս մանրագեպը, առանց խորանալու նրա մեջ, արձանագրել է հուշերում։ Իր նա ունի իրապատում հիմք, անկասկած է։ Բայց կյանքի փաստը գեղարվեստական, անեկդոտի ձև է ստացել։ Չի բացառվում, որ ընտանեկան, կենցաղային պատմությունը այս ձևով ինքը՝ Պարոնյանն է հետո տարածել։ Իսկ դրվագը ինքնին ահա թե ինչ է հուշում։ Նրա համար դրամը այս շրջանում էլ իր կենցաղային-նյութական արժեքով արհամարհելի է, այն անհամեմատ բարձր արժեք. քան հոգևոր արժեքները, ասենք, սիրելի աշուղի երգը։ Նա անընկբայրեն կողմ է գեղարվեստական արժեքները նյութականից բարձր դասելուն։ Ու ահա հոգևոր աշխարհին պատկանած, կենցաղի հունից դուրս եկած մի պահի կատարել է դրամները աշուղին նվիրելու «խենթությունը»։ Հետո, եղբոր առաջ արդարանալու համար ոտել է այս զվարճապատում բացատրությունը։ Իսկ որ աշխարհիկ վայելքներին տրվելու նրա հակումը մշտապես

8 Հրանտ Ասատուր, նշվ. աշխ., էջ 648։

9 Նույն տեղում, էջ 645։

զուգորդված էր հոգևոր կողմնորոշմամբ, վկայում է կենսագիրների հիշած երկու ուրիշ դրվագ։ Ճիշտ է դրանք վերաբերում են Պարոնյանի կյանքի տարբեր տարիներին, բայց, դրանցից մեր օրինակները կենսականությունը չեն կորցնում, որովհետև ձգտում ենք մեր ունեցած սուղ տվյալների օգնությամբ արվեստագետի կյանքի ու նկարագրի բնութագծերը բացահայտել։ Նախ, մեկ վկայություն Ադրիանուպոլսից. Պարոնյանը «հավաքույթներու մեջ կը սիրեր սետիրին վրա ընկողմանիլ, ու այդ դիրքով դիտել ու խոկալ, իսկ ցորեկները կը նախընտրեր հաճախել թահթագալեի ամենահետին կապելաները. հրեական կեթոյի այդ ժխորալի եռուզեռին մեջ է, որ ան ինքզինքը առանձնացած կ'զգար ու կորոճար օղիի աժանագին շիշին առջև, իր այնքան թանկագին գլուխգործոցները»[10],

Եթե հայտնի չէ, թե այս կենսագիրը Հ. Պարոնյանի կյանքի ստույգ որ շրջանը նկատի ունի, իսկ գուցե նա խառնում է Ադրիանուպոլսի ու Կ. Պոլսի շրջանները, ապա մյուս կենսագիրը հստակ նշում է ժամանակը և տեղը։ 1880-ական թվականների կեսին, հիշում է նա, երբ Պարոնյանը ապրում էր Օրթագյուղում, բնավորությամբ շատ քաշված մարդ էր, իրեն հեռու էր պահում ոչ միայն մեծատուններից, այլև ուրիշ շատերից։ Այցելում էր միշտ Թաղի Հինուկ գինետունը, մշտական ընկերակիցներ ունենալով պատրիարքարանի բազմավաստակ տեսուչ Կարապետ Խաչատուրյանին և Սանտալճյանին։ Նրանց խմբում միշտ համով-հոտով խոսակցություն էր ծավալվում, որ «ամբողջ esprit էր ու անընդհատ ծիծաղներ առաջ կը բերեր»[11]։ Ու ինչն էր հետաքրքրքրական։ Նրանք երգիծանքի այդ տոնը իրականացնելու աշխատանքի բաժանում ունեին ասես։ «Խաչատուրյան էֆ.-ին մասնագիտությունն էր,—հիշում է կենսագիրը,—հին օրերու և հին դեմքերու պատմություններ մեջտեղ բերել, մինչ Պարոնյան հեգնանքի սուր ընդելուզումներու և քմածին ու ախորժելի մեկնաբանություններու բաժինը կը ստանձներ»։ Ընդ որում, շատ կարևոր մի բնութագիծ է հիշում կենսագիրը. Պարոնյանը «աղվոր բան մը ըսողի հավակնոտ դիմագծեր չէր առներ բնավ,—ինչպես կընեին մեր հիմակվան սալոններուն արհեստական «սրամիտները»՝ առաջին քահքահը իրենք արձակելով,— այլ երեսը կախ՝ գրեթե տխրամած դեմքով՝ բառ մը, խոսք մը կը սահեցներ, ու խնդուքը կսկսեր»[12]։ Այսպես շարունակվում էր հաճախ ամբողջ երեկոն, մինչև կեսգիշեր, երբ ի վերջո փակվող սրճարանից նա ճանապարհ էր ընկնում դեպի կենցաղային այն իրականությունը, որ տուն է կոչվում։ Բայց երգիծանքի հրավառությունները, սրամտության տոնը հանկարծ նորից բռնկում էր կեսգիշերին, Թաղի հեռավոր բարձունքի այն մասում, ուր Պարոնյանի վարձած բնակարանն էր։ Բանն այն է, որ եզակի մի զուգադիպությամբ նույն եռահարկ տան վերնահարկն էլ վարձել էր ժամանակի նշանավոր կատակերգակ Դ. Թրյանցը։ Դերասանն ու երգիծաբանը իրար հանդիպելով տան մուտքի առջև կամ սանդուղքի վրա, երկար զրուցում էին, զվարճալի պատմություններ փոխանակում, հետո հրաժեշտ տալիս իրար՝ մյուս օրը դարձյալ հանդիպելու, երգիծական նոր տոն կազմակերպելու պատրաստակամությամբ։

Շուտով Պարոնյանը զգաց, որ կարոտում է Կ. Պոլիսը։ Այժմ հեռվից սկսում է ավելի հեռատեսորեն նայել մեծ քաղաքին, այնտեղ ծավալվող մշակութային կյանքին։ Մեծ աշխարհի հետ առաջին հանդիպումը հաճելի չէր եղել, բայց նա սկսում էր գիտակցել, որ նման հանդիպումները հազվադեպ և միայն առանձին բախտավորների համար է տոնի վերածվում։ Կյանքը, իրականությունն այն է, ինչ տեսավ նա։ Այլ աշխարհ գոյություն չունի։ Իր խնդիրն այն է, որ չընկրկի, գտնի տեղը, հաստատի իրեն այդ խայտաբղետ ճշմարտությունների քաղաքում, նաև բարձր լինի, իր ճանապարհը գտնի։

---

10 Հ. Աղասյան, նշվ. աշխ., էջ 133։

11 Նույն տեղում։

12 Տ. Արփիարյան, Հիշատակներ խմբագրական կյանքէ (Լույս, 1908, № 13, էջ 428)։

Հիմա ավելի ու ավելի հաճախ էր խորհում Կ. Պոլսում իր տեսածի, ձեռք բերածի, զգացածի մասին։ Սկսում էր հասկանալ, թե ինչ ունի, ինչ չունի։ Ով է ինքը։ Իր ունեցածի որ մասն է իրական, որը՝ պատրանք։

Շուտով նա սկսեց նաև հաճախակիացող անբավականության զգացում ապրել. ինքը, ճիշտ է, եղբոր գրասենյակում, բայց դարձյալ ծառայության մեջ է։ Իսկ նյութասեր այդ աշխատանքը իր հստակ օրենքներն ունի, դրանց ենթարկվողներին է սիրում։ Իսկ մարդու իր տեսակը... այդ պայմաններում իրեն ճնշված է զգում, հաճախ լուռ ըմբոստանում։ Դա նկատում էր նաև եղբայրը՝ Սահակը։ Նկատում էր ու սխալ բացատրում։ Նա չէր հասկանում, որ իր սերը, հոգածությունը եղբոր հոգին կաշկանդող տհաճ կապանքի է վերածվում։ Կապանք, որը նա երբեք չի հանդուրժի։ Հասունանում էր նոր, անցանկալի հակադրություն։

Այդ ամենին վերջ տալու մի ճանապարհ կար. կանգնել սեփական ուղու վրա, ընդունել, որ դա է իրենը։

Պարոնյանը սրտի դողով պատրաստվում, սպասում էր մայրաքաղաքի հետ նոր հանդիպմանը։ Ուզում էր հուսալ, որ այս անգամ ամեն ինչ ուրիշ պիտի լիներ։ Նախկին վարդագույն երազներին սկսում էր փոխարինել արևի տակ իր տեղը ծանր, համառ աշխատանքով նվաճելու վճռականության զգացումը։

МОЛОДОЙ АКОП ПАРОНЯН НА ПУТЯХ САМОУТВЕРЖДЕНИЯ (1868—1870 гг.)

А. М. ГЛДЖЯН

Резюме

Художественное своеобразие творчества великого писателя-сатирика Акопа Пароняна неоднократно становилось предметом изучения. Однако до сих пор литературоведы не исследовали процесс формирования личности великого писателя и сатирика, те конкретные психологические и художественные задачи, которые стояли на его пути и без решения которых он не мог занять свое достойное место в литературном процессе.

В биографии А. Пароняна знаменательны те годы жизни (1868—1870 гг.), когда после пятилетнего пребывания в Константинополе писатель возвращается домой, в Адрианополь.

А. Паронян понимает, что его жизнь и талант принадлежат народу, и он должен жить в «столице армянской культуры».